**Արձանագրություն N 3**

**«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար ավտոմեքենայի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/21» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

«25» մարտի 2014թ.
ժամը՝ 17:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Վաչե Մարգարյան** (Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար),

*հանձնաժողովի անդամներ՝*

**Արմեն Ալյանյան** (Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար)

**Արթուր Ոսկանյան** (Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար),

**Խաչիկ Ղազարյան** (Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար),

**Կարեն Մելքոնյան** (Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար):

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի մասնագետի պարտականությունները ժամանակավորապես կատարող):

---

**1.Տվյալներ մասնակիցների կողմից առաջարկված ապրանքատեսակների և հրավերով պահանջված ապրաքատեսակի համարժեք լինելու մասին.**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կողմից ավտոմեքենաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/21» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում մասնակիցների ներկայացրած հայտերով «Վեկար» ՍՊԸ-ն առաջարկել է մատակարարել ԳԱԶ 330202-2288 մակնիշի ավտոմեքենա, իսկ «Մոլտի մոթորս» ՍՊԸ-ն՝ ԳԱԶ 330202-1288 մակնիշի ավտոմեքենա՝ ներկայացնելով դրանք որպես հրավերով պահանջված ԳԱԶ 330202-4289 մակնիշի ավտոմեքենային համարժեք ավտոմեքենաներ: Նշված մակնիշների ավտոմեքենաների համարժեքության հարցը պարզելու նպատակով գնահատող հանձնաժողովը, 24.03.2014թ. թիվ 2 որոշման համաձայն, դիմել է տվյալ գնման մասով պատասխանատու ստորաբաժանմանը:

Պատասխանատու ստորաբաժանումը առաջադրված հարցի պարզաբանման նպատակով գրությամբ դիմել է ԳԱԶ մակնիշի ավտոմեքենաների արտադրող հանդիսացող կազմակերպությանը: 25.03.2014թ. պատասխանատու ստորաբաժանումը, հիմնվելով նշված ավտոմեքենաների արտադրող հանդիսացող կազմակերպության եզրակացության վրա, գնահատող հանձնաժողովին տրամադրել է իր համապատասխան եզրակացությունը, համաձայն որի մասնակիցների կողմից առաջարկված մակնիշի ավտոմեքենաները համարժեք չեն հրավերով պահանջված մակնիշի ավտոմեքենային:

Հիմք ընդունելով Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-րդ կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին)՝

Հանձնաժողովը որոշեց՝

-«ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/21» ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:

- հաստատել «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-11/21» ծածկագրով ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է).

Ընդունվել է որոշում. կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ Վաչե Մարգարյան

Անդամներ՝
Արմեն Ասլանյան
Արթուր Ոսկանյան
Խաչիկ Ղազարյան
Կարեն Մելքոնյան

Քարտուղար՝ Մարիամ Հայրապետյան